

Գ. ԱԵԼԻԽՈՎԱ ՅԵՎ ՆԱՏԱԼԻԱ ՍԱՅ

ՓՐԻՑ ԲԱՌԻԵՐ

ՊԻԵՍ 7 ՊԱՏԿԵՐՈՎ

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՆԿԱԿԱՆ
ԹԱՏՐՈՒԹ
ՈԵՊԵՐՏՈՒԱՐԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆ - 1929

-
১৮

Վ. ՍԵԼԻՆՈՎԱ ՅԵՎ ՆԱՏԱԼԻԱ ՍԱՑ



ՖՐԻՑ ԲԱՌԻԵՐ

Պիես 7 ՊԱՏԿԵՐՈՎ

A 39498

Գործողությունը կատարվում է մեր ուերի Բալարփայում

Մոռկվայի մանկական բարոնի ռեպերտուրից

Թարգմ. Ս. Զ.

—



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929



ԹԵՏՐԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 486

Տիրած 1500

Գրառեպվար № 2082 թ.



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԿԱՐԻ ԲԱՌԻՒԹԻ	բանվոր
ԵԼՉՈ	նրա կինը
ՅԲԻՑ	նրա վորդին, 9 տարեկան
ՄԱՐԹՈ. ԲՅՈՒՏՆԵՐ	խանութպան կին
ՍՏԲՆՆԵՆՍԼԵՑՆ	ձուլազործարանի տեր
ԿՈՒՐՑ	ժանդարմական սպա
ՅԲՌՈՒԻ ԴԵՆԵԿԵ	դպրոցի վարժուհի
ԵՐՆՈ. ԴԱՋԻ	
ԼՈՍՏՈ ՀԱՅՆԵ	
ՄԱՐԹՈ ՇՊԻՑԵԼ	դպրոցականներ
ԱԼԻՍՈ. ՇՊԻՑԵԼ	
ՀԱՆՈ	բանվոր, 50 տարեկան
ՅՈՀԱՆՆԱ	կոմմունիստուհի
ՎԻԼՅԵԼՄ ՀԱՅՆԵ	բանվոր
ՇՊԻՑԵԼ	բանվոր
ԲԱՆՎՈՐ	
ՄԱՐԻՑ	դպրոցի ծառա
1-ին ԺԱՆԴԱՐՄ	
2-րդ ԺԱՆԴԱՐՄ	
ՄՊԱՍՈՒՀԻ	
ՄՊԱՍՈՒՀԻ (Լոքի)	

ՊԱՏԿԵՐ 1-ԻՆ

Աղյատիկ սենյակ, Խորբում դուռ, դրանից ձախ—լուսամուտ, Աջից դարձալ լուսամուտ. Սենյակում սեղան, պլիսա, միհանի արռո, պահարան, Ելզան՝ բոխիսավորի դեմքով ջանել զեղեցիկ կին, ափսենելու և լվանում: Ֆրիգը խաղում է սիկնիկների նես (սիկնիկները կրտած՝ շինած են լրազրերից. աչերի և ողը կարմիր կետեր են): ՅԲԻՑ.—Յես ճիշտ ասացի, չե՞ն, ընկերներ: Սեղմում եմ ձեր ձեռքը (ինքը խփում է իր ձեռքին, ապա կանգնում և սիկնիկ-

ներից մեկի յետեվ ու ճշում) Սուտ ես ասում, սուտ ես ասում (կանգնում ե իր օեղը): Դուք հիմար մարդ եք, ուրիշ վոչինչ: Թանի վոր գործադուլ ե, պետք ե համբերել, իսկ գուք, նշանակում ե, ուրատ (միթ և տնում) ունատ, ուսմենատ... Մայրիկ, մայրիկ, են խոսքը վժնց են ասում:

ԵԼԶԱ.—Վ. իսոսքը:

ՖՐԻՑ.—Են վատ խոսքը:

ԵԼԶԱ.—(Գերշացնում ե ամաններ լվանալը, վառում ե պլի-
սան) Խաղալիքներդ հավաքիր ու սեղանը գցիր:

ՖՐԻՑ.—(Նեազանգ սկսում ե հավաքել, բայց օւրունակ ա-
խատում ե հիօնի խոսքը) Ծերենատ, ուրբենատ, ոիկերատ...
Մայրիկ, մեր հայրիկն ամենից լավն ե, չ՞:

ԵԼԶԱ.—Այո, մեր հայրիկը շատ լավն ե:

ՖՐԻՑ.—Նա լավն ե, խելոք, բարի, շատ բարի լի: Բայց ինչու
լի վախենում:

ԵԼԶԱ.—Նա վոչ մի բանից չի վախենում:

(Ֆրիցն ել բան չի խոսում, բայց ինչ-վոր մտեր ունի):

ԵԼԶԱ.—(Գետնախնձորը հանում է յեվ եասվում միքանի ան-
գաճ, զետնախնձորի մեկը պակասում ե): Ֆրից, դու
գետնախնձոր ես վերցրել:

ՖՐԻՑ.—Յերեկ վերցրել եմ:

ԵԼԶԱ.—(Նաստուքամբ յես և գառնում): Առանց հարցնելու մի
ամբողջ գետնախնձոր ես վերցրել:

ՖՐԻՑ.—Չե, Չե: Յերբ դու տվիր, յես ել վերցրի: Հիշում ես, յե-
րեկ ճաշին դու ինձ չորս գետնախնձոր տվիր (հիօնում է
յեվ օւրբերը լիզում):

ԵԼԶԱ.—Չորս գետնախնձոր: Եսոր հայրդ կդա, իսկ մենք ըն-
դամենը ութ գետնախնձոր ունենք. ախր ամեն մեկին յե-
րեք հատ ել չի հասնի:

ՖՐԻՑ.—Չի հասնի... Մայրիկ, յես եմ վերցրել: (Նեռանում ե,
գանակը վերցնում յեվ սկսում մի մեծ ասեղ կարել: Հան-
կարծ օսա զոհ մպում ե) Մայրիկ, յես դիտեմ գործա-
դուկն ինչ ե: Գործադուկն են ե, յերբ հայրիկը գործարան
չի գնում, իսկ մենք քիչ գետնախնձոր ենք ունենում ճաշի
համար: Յես, ուրեմն, մեծ եմ. ենպես չի, մայրիկ:

ԵԼԶԱ.—(Նուզված ե զետնախնձորների պատճառով: Յոպրակից
բափում ե բոլոր մնացած, մի բռաչափ ճավարը, լվանում
յեվ զնում վառարանի գրա):

Ներս և մտնում Մարքան, կասկածելի մի կին՝ անոռու տարիքի: Դը-
ռամն թվակոցը լսելով՝ Ձրիցը պրկլում է Տեղից՝ կարծելով թե նայն
իւ Ելզան զլուխը ուղում եւ:

ՄԱՐԹԱ. — Բարե, սիրելիս, բարով աղա ջան:

ՅԻՒՅ. — Բարե:

ԵԼԶԱ. — Բարե (հիասթափված):

(Մարքան նստում եւ սեղանի մոտ, նայում եւ Երան լեզ
ձեռագործք վերցնում):

ՄԱՐԹԱ. — Չարչարվում եք շարունակ: Եղքան ջահել ու եղքան
չարչարանք: Եղպես զեղեցիկ կին ու ամեն բան ինքներդ
եք անում: Ինչու մի զործ անող չեք բռնում, սիրելիս:

(Ելզան լուսում եւ Մարքան օտա զոհ ե, վոր խայրեց):

ՄԱՐԹԱ. — Դուք ախր մեր փողոցի ամենասիրուն աղջիկն եյիք
համարվում: մարդու զնացիք՝ ել ձեզ նայել չի լինում: Վաչ
կարմրություն, վաչ թարմություն: Վոչինչ: Գեղեցկություն
չի մնացել: (Փատում ե, սեսնելով, վոր Ելզան հուզված ե,
ու աժխատում ե հազը պահել): Են, մի հուզվիք, սիրելիս:

ԵԼԶԱ. — (Բոճկվելով) Դուք եկ վարակցից հնարեցիք, վոր լես
հուզվում եմ: Յես զբազված եմ ու չեմ լսում:

ՄԱՐԹԱ. — Շատ ափառ, վոր չեք լսում, սիրելիս: Դուք պետք ե
ուշազիք վերաբերվիք ձեզնից մհծերի խոսքին: մանավանդ
ձեր հարկանների, վորոնք տեսնում են ձեր զժրախտ կլանքը...

ԵԼԶԱ. — (Բուրբոնվելով) Ֆրառու Բյուտներ:
ՅԻՒՅ. — (Ցատկում ե իր ձեռնով օբնած հրացանը ձեռին լեզ
կանգնում ե մոր տռաջ) Ֆրառու Բյուտներ, դուք մայրի-
կիս մի վիրավորեք: Հայրիկս ասել ե՞ իրը ինքը տանը
չինի, մայրիկիս յես պիտի պաշտպանեմ:

ՄԱՐԹԱ. — Հանգստացիք, սիրելիս, հանգստացիք... Յես ձեր լավի
եմ ցանկանում միտյն (ձեռով նաև ե անում Ելզային,
վոր մատենա իրեն լեզ Փրփուն մի կողմ անի: Ելզան ա-
խտում ե մաքալ, հեռացնում ե Փրփուն լեզ մատենում
Մարքային):

ՄԱՐԹԱ. — (Կամաց) Ինքներդ զիտեք, սիրելիս, թե վորքան
բարյացակամ եմ վերաբերվում զեղի ձեզ: Ես տանն ապ-
րում են սարսափելի բամբասողներ: Յես վոր, զիտեք, բամ-
բասանք չեմ սիրում, բայց բոլորի լեզի ծերինը միե-
նույն բանն եւ Ձեր ամուսինը, սիրելիս, կարծեմ ամեն որ
տանը չի զիշերում: Ենպես չի:

ԵԼԶԱ. — Դուք եղ վճրտեղից գիտեք:

ՄԱՐԹԱ. — (Շատ զոհ, վոր բոնեց երան) Լավ եք անում, սիրելիս,
լիս, վոր չեք ուզում թագցնել: Բայց ասացեք, սիրելիս, նա
վճրտեղ և լինում գիշերները, ասացեք, և յս կսովորեցնեմ
ձեզ, թե ինչպես աղատվեք եղ բամբասող կանանցից:

ԵԼԶԱ. — Գործարանում գործադուլ եւ նա կոմմունիստ ե. ուզում
ե, վոր բանվորները գործի չկանգնեն, մինչև վոր իրենց
պայմաններն ընդունեն: Շարունակ ինչ-վոր ժողովներ ունի:

ՄԱՐԹԱ. — Ժողովներ: Իսկ դուք, խեղճ աղջիկ, սովամահ եք լի-
նում: Չե, նա ձեզ ուզզակի չի սիրում: (Պարերիկ ձեզով)

Մի տեսեք, թե ինչ և ձեր ու ձեր լեռեխի հագինը:

ՖՐԻՑ. — (Կր բանկոնին նայելով) Ճիշտ ե, իմ կուրտկան լավն
ե, ֆրառ Բյուտներ: Ես ինձ համար կարել են հայրիկի
շալվարից ու մալրիկի կոփտայից:

ՄԱՐԹԱ. — Խեղճ լեռեխա: (Կամաց Ելզա, ին) Հիմի ամեն տեղ
կործադուլներ են. բանվորական աշխատանքն այժմ լավ
չի վարձատրվում: Ձեր ամուսինը լեթե ձեզ սիրեր, նա,
ինարկե, կերթար աշխատելու: Մենք հիմի մեր խանութն
ունենք, բայց մենք մեր փոքրիկ գումարը ձեռք բերինք
նույնպես գործադուլի շնորհիվ:

ԵԼԶԱ. — Ի՞նչպես:

ՄԱՐԹԱ. — Շատ պարզ: Դա վաղուց եր Մոտիկ գործարանում
խոռոչություն ծագեց: Բանվորներն սկսեցին զալմաղալ ա-
նել-իրը թե քիչ են վճարում իրենց. իսկ իմ մարդն ող-
տըվեց գրանից ու իր ծառայությունն առաջարկեց գործարա-
նատիրոջ: Գործադուլ անողներին հեռացրին, իսկ մարդու
ուրիշ բանվորներ հավաքեց, վոր ավելի եժան սկսեցին աշ-
խատել. են, գործարանատերն ել մարդուս «շնորհակալու-
թյուն» հայտնեց մի կարգին գումար տալով: Այո, իմ մար-
դը ինձ շատ, շատ եր սիրում. ուրիշների նման չեր: Ե,
աստված հոգին լուսավորի, խելոք մարդ եր:

Ներս ե մենում Կարլը. առաջինը երան նկատում ե Ֆրիցը:

ՖՐԻՑ. — Հայրիկ, հայրիկ, հայրիկ:

ՄԱՐԹԱ. — (Շփորված հավաքում ե ձեռազործը): Են, իս զնամ:
Ցանկություն, սիրելիս: Բարե, բարե, կարլ:

ԿԱՐԼ. — (Շատ չոր) Ցանկություն (Մարքան զուրս ե զնում,
Կարլը ծպօռմ ե): Են, վիճաց ես, տղաս, յերկու որ եքեղ չեմ
տեսել, փոքրիկ կոմմունիստ:

ՅԵՐԻՑ. — Վաշինչ. միհծացել եմ:

ԿԱՐԻ. — Այս, այս, մի ամբողջ զլխով միհծացել եմ: (ԿՅՈՉԵ) Արդ
կինն ինչու յեր լեկել:

ԵԼԶԱ. — Յես չիմ կանչել: Ինքն-իրեն լեկավ...

ԿԱՐԻ. — Դրան բան մի վստահի: Դրա մարդը մատնիչ ե լեղել.
բանվորներին մատնել ե. հենց զբա ռեխն ել հոտհոտով
շան ռեխն ե:

ՅԵՐԻՑ. — Ճիշտ ե, ճիշտ ե, հալրիկ. նա շարունակ բան ե վորո-
նում: (Ցնազում և Մարքալին—բարերանում և եռու ծընկ-
ները) Հալրիկ հայրիկ ջան, են խոսքը վոնց են ասում—
ունին-դենու: Ճիշտում ես, զոր անցյալ անգամ ասիր, յերբ
քեզ մոտ ընկերներ կալին, ու զեմքդ ել ենալես արիր, յերբ
բարկանում ես... ու-դի...

ԿԱՐԻ. — ՈՒՆԿԵՊԱՄ:

ՅԵՐԻՑ. — (Շատ ուրախ) Այս, ալո, այս: Դա վատ խոսք ե:

ԿԱՐԻ. — (Վիծազում ե) Շատ վատ:

ՅԵՐԻՑ. — Յես զիտեմ, եղ խոսքն ասում են նրանց համար, ովքեր
չեն կարողանում իրենց խոսքը պահել:

ԿԱՐԻ. — Ճիշտ ե, կեցցես: (Նախում և ժամացույցին) Ուտելու
բան կմ, ելզա:

ԵԼԶԱ. — (Անխոս սեղանի վրա յե գնում գետախնձոր, բառովի
ու հաց:

ԿԱՐԻ. — Ինչքո՞ն համեղ խորափիներ:

(Ելզան յուրաքանչյուրի առաջ զնում ե յերկուս ու կես
գետախնձոր յեզ մի զգալ բառովի: Այդ բալորց բոպետին ոււ-
փում ե. ափսեյում մնում ե կես գետախնձոր: Ելզայի հազը
բոնում ե. Կարլը մնացած գետախնձորը զնում ե Ելզայի ա-
ռաջ):

ՅԵՐԻՑ. — (Քաղցած ե) Իսկ յերեկ յես չորս ամբողջ գետախնձոր
կերա:

ԿԱՐԻ. — (Ժամալով) Զորս: Յես կարծում եմ եղքան շատ ուտելը
մինչի անգամ վնաս ե:

(Ելզան լալիս և իր գետախնձորի վրա):

ԿԱՐԻ. — Ելզա, ելզիկ, բնչ պատահեց:

ԵԼԶԱ. — Յես ել չեմ կարող հսկես ապրել (լալիս ե):

(Կարլն ու Քրիստոֆը նետվում են զեպի նա):

ԿԱՐԻՆ ու ՅԵՐԻՑ. — (Վիտսին) Հանգստացիր, Ելզա:

Մայրիկ լաց մի լինի. մի, մալրիկ ջան, թե չե մենք լաց
կլինենք:

ԿԱՐԼ.—Ինչու չես քժշկվում, Ելզա:

ՖՐԻՅ.-(Չի բողնում եռց խոսի. կամաց) Մայրիկն ինձ գործարան ուղարկեց իմանալու... հիվանդանոցն ել, դպրոցի պես, փակել են: Հայրիկ ջան, ենտեղ զրած ե, վոր բաց չեն անի, մինչև վոր գործադուլը չվերջանա:

ԿԱՐԼ.—Սրիկաներ, վոչ մի բանի առաջ կանգ չեն առնում:

ԵԼԶԱ.—Կարիք չկա ուրիշներին հայնովելու, կարլ, մենք մուրացկաններից վատ ենք ապրում, իսկ դու սկի մտածում ես մեր մասին:

ԿԱՐԼ.—Ինչեր հս խոսում:

ԵԼԶԱ.—Յերկու ամսից ավելի յե՞անգործ ես: Ունեցածներս ծախել ենք: Վաղն թնչ ենք անելու—չգիտեմ. դու ել հո—մի ժամ մեզ հետ ես, յերեք որ՝ չգիտենք՝ վորտեղ ես: Յերկար լոել եմ, բայց ել չեմ կարող: Դու վհչ յերեխին ես սիրում, վոչ ել սիրում ու խղճում ես ինձ:

ԿԱՐԼ.—Յես քեզ չեմ սիրում, Ելզա: Ախր յես վոչվոք չունեմ քեզանից ու յերեխից բացի: Գիտեմ, քեզ համար շատ ծանր է: Թե դու, թե յերեխան պետք ե դիմանաք, իսկ ինձ համար, կարծում ես, հեշտ ե: Յերեք գիշեր, առանց շորերս հանելու, քնել եմ ցեխի մեջ, հատակի վրա: Յես քեզ, Ելզա, շատ շատ եմ սիրում. շատ եմ սիրում և յերեխին և զրա համար ել պետք ե պալքարեմ: Յեթե յես ու դու չե, գննե Ֆրիցը թող լավ ապրի:

ԵԼԶԱ.—(Նաօսվելով) Իսկ աշխատանքի գնալ չես կարող, կարև, քեզ ավելի լավ կվարձատրեն ախր:

ԿԱՐԼ.—Գործադուլը խափանել... Եղ մտքերը վմբարեղից են քեզ:

ՖՐԻՅ.—Եղ մալրիկի միտքը չի, եղ Ֆրառ Բյուտներն ասաց:

ԿԱՐԼ.—Կարլ Բառերի կինը եղպես մտածող ծանոթներ չպետք ե ունենա: Յես ամաչում եմ քո փոխարեն, Ելզա: Յես խոսք եմ տվել ընկերներին՝ պայքարել մինչև վերջը: Ու կպատքարեմ, վորքան ել ծանր ու դժվար լինի:

(Ելզան մոտենում ե Երան):

ՖՐԻՅ.—Դե քանի վոր խոսք ես տվել, ել վոչինչ չես կարող անել, թե չե դու ել, հայրիկ ջան, զեռեկատ կիննես:

ԵԼԶԱ.—Մի բարկանա, կարլ Յես քեզ շատ եմ սիրում: Յես դու մեզ հետ լինեյիր, յես ամեն բան կտանեյի: Յես քեզ շատ եմ սիրում:

ԿԱՐԼ.—Այ, քեզպեսների պատճառով ե, վոր, խեղճ կնիկ, բան-

վորները նահանջում են: Բայց չե՞ վոր մենք ձեզ համար ենք պալքարում, մեզ բոլորիս համար: Դու հիշում ես, Ելզա, ինչպես զործարանի տասը ժամվա աշխատանքից հետո յես տան եյի գալիս բոլորովին հալից ընկած, իսկ որական ըստանում էլինք... Յեթե մեր պահանջներն ընդունեն, մենք կաշխատենք ութ ժամ և կստանանք ավելի, բայց զլամավորը՝ մենք պահանջում ենք, վոր լեթե բանվորը մեքենալի տակ ընկնի, նրա ընտանիքը վողորմություն չմուրա դռնեցուս, ինչպես, հիշում ես, պատահեց Բլյումի ընտանիքի հետ: Պետք է պալքարել: Յես պալքարում եմ վոչ միայն ընտանիքի բարորության համար, այլ բոլոր ճնշվածների համար: Դա պետք է:

ԵԼԶԱ. և ՅԻՐԻՅ. — Պետք է, պետք է:

Մենում են զգեստավորված Հանսի ու Յոհաննան, Հանսը միրուք ունի: Յոհաննան նազնված է տպամարդու պես, ո՛վիք բարձրացրած: Հանսը դուռը փակում է, միրուքը վերցնում:

ՅԻՐԻՅ. — Հանս-համ-համ, այ վախացրեց համ:

ՀԱՆԱ. — Ինչ արած, ժամանակն եղակն եւ (**Կատակ են**):

ԿՈՐԻ. — Վորեն բան և պատահել:

ՅՈՀԱՆՆԱ. — Մենք տեղեկություն ունենք, վոր մեզ հետեւում են:

ՀԱՆԱ. — Եերեկ ձերբակալել են Կնորրին, Բելլին և ելի միքանի կոմմունիստ գեկավարների Բողմանի զործարանից:

ՅՈՀԱՆՆԱ. — Այսոր զործադպուլ են արել ելի միքանի զործարան, զրանց թվում և Կելերի զործարանը, ուր դու պահտացիա ելիք անում: Տասչորս զործարան կանդնած են:

ԿՈՐԻ. — Իսկ Կնորրին ինչո՞ւ համար են ձերբակալել:

ՀԱՆԱ. — Մեկի մաս հրացան են գտել Մատուներին մեղադրանք չի առաջադրված: Սակայն բաց չթողին, «ախնչե պարզվի»:

ՅՈՀԱՆՆԱ. — Գաղանի ժողով և լինելու, և յերեք որից հետո դու պետք է խօսես այնտեղ: Մի խումբ բանվորներ Մաքսի զլխավորությամբ ուղղում են համաձայնության գալ և զործի զնաւլ նախկին պալմաններով:

ԿՈՐԻ. — Բանչպես:

ՅՈՀԱՆՆԱ. — Ասում են հալից ընկել ենք: Հույսներս քեզ վրա լի:

Այդ բանը չպետք թույլ տալ:

ՀԱՆԱ. — Մենք բոլորս ախտել կլինենք:

ԿՈՐԻ. — Մաքսի խմբակում 90 մարդ կա:

ՀԱՆՍ. — Ալո, մոտ եղքան ե:

ԿԱՐԼ. — Պետք ե լարենք սեր բոլոր ուժերը: Յեթե նրանք աշ-
խատանքի կանգնեն, ամեն ինչ կորած ե:

ՅՈՀԱՆՆԱ. — (Տեղից յելնելով) Դու հիմի առանձնապես պետք ես:
Զգնւշ յելիր:

ՀԱՆՍ. — Թղթեր չունես: Բոլորը վառիր: Կարող ե պատահել՝ խու-
զարկություն լինի: Մնաս բարով: (Հեռանում ե):

ԿԱՐԼ. — (Նյարդային անցուզարձ ե անում սենյակում. կանց
ե առնում) Յես չգիտեմ՝ հետեւյալ անդամը յերբ կարող եմ
գալ տուն: Այս քեզ հինգ մարկ, բոլորը, ինչ կարողացա
ձեռք բերել: (Բաց ե անում հասակի մի ասխակը, վեր-
ցընում ե այնտեղից յերկու առեանակ ու զնում գրանք):
Երիցը մոռենում ե հետաքրքրված: Մեկը բխկացնում ե
գուռք, հայրը հասակի ասխակը ծածկում ե, Թրիցը խո-
կույն նսում ե վրան):

Ներս ե մտնում Մարտան յել կտսկածանելով ըուրջը նայում:

ՄԱՐԹԱ. — (Չորս կողմ (Յ այբ ածելով)) Ինձ թվաց, թե ձեզ մոտ կո-
ղովը ձեռին ծերունի յեկավ. ասի՞ կանաչի ծախող կը լի
(սփորվում ե, իրեն կորցնում):

ԵԼԶԱ. — Բայց չե՞ վոր ձեր խանութում կանաչի ունեք:

ՄԱՐԹԱ. — (Ընդհատելով) Յես կարծեցի սա...

ԿԱՐԼ. — (Չոր) Իրի կունան ինչ կանաչի ծախող կարող ե լինել:

ՄԱՐԹԱ. — Ներկացնեք, սիրելի Ելզա, բայց, բայց ինձ անհրաժեշտ
և բան-ման առնել... կարծեցի...

ԵԼԶԱ. — Մեղ մոտ մարդ չի յեղել, Թրառու Բյուտներ:

ՄԱՐԹԱ. — Շատ ափսոս, ափսոս (յելնում ե):

ԵԼԶԱ. — (Դուռը ծածկում ե, յետեվից մոռենում ե Թրիցին յեվ
համբուրում ե երա գլուխը) Այ դու խորամանկ: Ես փոք-
րիկ դավադիրն իսկույն դիմի ընկավ (ծիծաղում ե):

ԿԱՐԼ. — (Թրիցին) Կեցցեմ: (Կնոջը) Խոստացիր, վոր նրա հետ
(ցույց ե օալիս զեպի դուռք) Հարեւանություն, բարեկա-
մություն չես անի: Զհավատաս զրա վոչ մի խոսքին:

ԵԼԶԱ. — Կանեմ ենպես, ինչպես ուզում ես:

ԿԱՐԼ. — Մի բան ել: Վոչ մի խոսք իմ մասին և այն մասին, թե
ոչ ե յեղել եստեղ: Դու վոչինչ չես իմանում:

ԵԼԶԱ. — Լավ հիշիր, Թրից:

ՖՐԻՑ. — Յես բան չեմ ասի:

ԿՈՐԻ. — Այս, Ֆրից, վահ մի խոսք իմ մասին. դու վոչինչ չգիտես: Հասկացնր:

ՅՐԻՑ. — Հայրիկ ջան, լիս ասացի արդեն, վոր հասկացա. նշանակում եմ վոչ մեկին ել բան չեմ ասի. հասկանում եմ հո...

ԿՈՐԻ. — (Ժապառով) Այս, այս, լիս հավատացած եմ, ընկեր, վոր դու քո խոսքի տերը կլինես (ծեղաց սեղմում ե լուրջ, ապա բարձրացնում ե ու նսեցնում ուսին). Կանգնած են յերեք ել):

ԵԼԶՈ. — Միշտ ալապես, կարէ քեզ հիտ միասին լինելինք:

ԿՈՐԻ. — Միասին ել կլինենք: Յեթև մենք մեր պալմաններն ընդունել տանք, այն ժամանակ ամառը քեզ ու Ֆրիցին կըտանեմ տառանոց և ամեն որ կզամ ձեզ տեսնելու: Դու նորից տոսող և ուրախ կլինես, Ելզա, ամեն որ կճաշես ու կընթրես, իսկ Ֆրիցի համար զբարուկներ ու տետրակներ կըզնենք, վորքան հարկավոր կլինի նրան զպրոցում: (Գործնական) Այս, Ելզա, լիս, լիրեի, յերկար ժամանակ տուն չեմ դա: Յերկու որից հետո, Ֆրիցի հետ, ժամը մեկին դուրս արի Վիլհելմի բուլվարն զբունելու: Յես շորերս փոխած կըլինեմ: Չեզ կտեսնեմ և մի կերպ փող կտամ:

ՅՐԻՑ. — Հայրիկ, իսկ ինչու լին նրանք ուզում վատ բան անել քեզ:

ԿՈՐԻ. — (Միծաղում ե) Ի՞նքս ել չզիտեմ, Ֆրից: Մենք ուզում ենք, վոր վոչ միայն զործարանատերը, վորը վոչինչ չի անում, լավ ապրի, ալ և մենք, վոր տշխատում ենք, մուրաց կանի պես չտպրենք:

(Դուռը ծեծումեն, Կարլը ցնցվում ե, օսնչում) Հարցը ուզ եւ:

ԵԼԶՈ. — (Օւրիս հայնով) Ո՞վ եւ:

ԶՈՅՆ. — Բաց արեք: Ժանզարմիներ: (Կարլը դուրս ե բոչում աշկողմի լուսամուտից):

ԵԼԶՈ. — Ֆրից, բան չասես, լոիր (գուռք բանում ե):

Ներս են մտնում ժանզարմիներ, կանգնամ են դրան մոտ՝ հրացաները ձեռներին:

ԺԱՆԴԱՐՄ. — (Սենյակեն այնի անցնելով) Որենքի անունով պահանջում եմ տսել՝ մոր և դժոնվում կար Յոհան Բառերը:

ԵԼԶՈ. — Եսանդ չի... զիշերը տուն չի լեկել:

ԺԱՆԴԱՐՄ. — Հայր ես մոմ պապիրոսի մնացորդն ե (վերցնում և պապիրոսի մնացուզք, վոր տակավին սաբ ե):

ԵԼԶԱ. — Իմն ե... յես եմ ծխել:

ԺԱՆԴԱՐՄ. — (Թեսնելով Կարլի մոռացած զլխարկը) Իսկ դըլ-իսպիլը, Նույնպես ձե՞րն ե: (Թրիցին) Ել, տղա, հալլդ մւր ե:

(Թրիցը աղերսազին նայում ե մորը):

ԵԼԶԱ. — Հալը տանը չի:

ՖՐԻՑ. — (Մեթենայութեն) Հայրիկը տանը չի:

ԺԱՆԴԱՐՄ. — Վաղժւց ե:

ԵԼԶԱ. — Նա գիշերը տանը չի յեղել .. յես արդեն ձեզ ասի:

ՖՐԻՑ. — (Անհանգիս լուսամուտին նայելով) Նա վաղուց ե զը-նացել:

ԺԱՆԴԱՐՄ. — Ի՞նչու յես խարում, նա հենց հիմի եստեղ եր. մւր ե (նայում ե ամեն կողմ): Զարմանալի լի. մինք պիտք ե հանդիպելինք իրար (լուսամուտին մոսենալով): Ըհմ: Հիմի հասկացա: Անպիտանը ծլկել է լուսամուտով: (Լուսա-մուտը բանում ե): Բանից յերկում ե՝ ալստեղ տանիքով իջնելու տեղ կա:

2-րդ ԺԱՆԴԱՐՄ. — (Սիծաղելով) Փորձենք հասնել (կրակում ե լուսամուտից). բայց մութն ե արդեն, ևնրան բռնել չի կա-րելի:

ԵԼԶԱ. — (ձառնում ե) Ի՞նչ եք անում:

ԺԱՆԴԱՐՄ. — Ի՞նչու եղանք վախեցաք. չե՞ վոր նա ենտեղ չի. նա տա-նը չի գիշերել (ատրճանակը ձեռին բռնած՝ մոսենում ե Ել-զային):

ՖՐԻՑ. — (Նեսվում ե մորը պաօտպանելու) Մայրիկ:

1-ին ԺԱՆԴԱՐՄ. — (Կամաց) Ե՞ն, չկա-չկա: Մեղ մնում ե խու-զարկություն կատարել: Ակսիր: (Խուզարկությունն սկը-վում ե: Ելզան ու Թրիցը կանգնած են զարմացած, մի-մյանց կպած):

ՊԱՏԿԵՐ 2-ՐԴ

ՍՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ ՄՈՒ

Ասիննենալեցնի կաբիները՝ օփողունի կամավորված։ Ասիննենալեցնը նուած է սեղանի մոտ, վորը ծածկված է թղթերով։ Զույգած սպասունին նկուն ու անաղմուկ շամփելով՝ մատուցարանով սուրճ է բերում։

ՍՊԱՍՈՒԽԾԻ. — (Երազրեւ և ալով) Պարոն, Բերլինի թարժ լրագրեր։

ԱՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ. — (Առանց նայելու) Դրեք ցած... Սիզար։ (Սպասուհին սիզարներ եւ մատուցում) Արանք չեմ... (Սպասուհին սալիս է ուրիշ սիզարներ յեզ ենոանում եւ անաղմուկ, զուռը ծածկելով) Լուրիչուն։ Ասիննենալեցնը խորասուզված է զործի մեջ։ Դուռը կամացուկ բացվում է, մանում եւ սպասավորը (լաֆելը)։ Նա յերկար լուռ կանգնում է դռան մոտ, հազում է, կամենալով զգացնել առ իր ներկայուրյունը)։

ԱՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ. — (Առանց զլուխիք բարձրացնելու) Ի՞նչ կա?

ՍՊԱՍՈՎՈՐ. — Պարոն, ներեցեք... Ձեզ մոտ... մի պարոն է լեկել զործով։

ԱՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ. — Զրազված եմ (գրում ե)։

ՍՊԱՍՈՎՈՐ. — Ասացի, պարոն, վոր զորք չեք ընդունում, բայց պարոնը խնդրեց հանձնել ձեզ իր այցելումսը։ (Մատուցում եւ մատուցարանով)։

ԱՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ. — (Կարգում ե) Հրավիրեցեք, (Գործը բողնում ե)։

ԿՈՒՐՅՑ. — (Մատում է սպասավորի ուղեկցուրյամբ, վորն իսկուսի բագնվում ե)։ Կուրց, ժանդարմական սպա (Վոաք Վոսին է խփում ու զլուխ առ ալիս)։ Ներեցեք, պարոն Ատիննենսւլյն, վոր անհանգստացնում եմ ձեզ։ Մեծապես կարեոր զործի համար եւ։

ԱՏԻՆՆԵՑՆԱԼԵՑՆԻ. — (Քաղաքավարությամբ, բերեվակի գոռոզությամբ), Խնդրեմ (ցուց է սալիս իր կողին գրված արող) Ի՞նչ զործ եւ։

ԿՈՒՐՅՑ. — Մեկը մշուսի լիտեից զործադուլներ են լինում ձեր զործադանում։ Գործադուլը, յեթե չեմ սխալում, յերկուամիս և՛ ի՞նչ շարունակվում եւ։

ՍՏԻՆՆԵՆՍ. — Միջոցներ ձեռք առնելը ձեր գործն ե:

ԿՈՒՐԾ. — (Քաղաքավարի) Մի փոքրիկ անձտություն, պլ. Ստիննենսլեյն, մի փոքրիկ անձտություն: Դուք բարեհաճցիք ասել — ձեր գործն ե: Մեր գործն ե, պլ. Ստիննենսլեյն, մեր ընդհանուր գործը — խոշոր կապիտալի ներկայացուցիչների (մասնացույց և անում Յօհննենսլեյնին) և իշխանության ներկայացուցիչների (մասնացույց և անումիրեն):

ՍՏԻՆՆԵՆՍ. — Խոսեցիք գործի մասին (սիգար և ծխում):

ԿՈՒՐԾ. — (Սիգարատուֆը հանելով) Թույլ կտաք: (Յօհննենսլեյնը զիսով և անում: Կուրցը ծխում ե): Ալսպես, ուրեմն, պլ. Ստիննենսլեյն, ձեր ռայոնը — բանվորական ամենաանհաճո ռայոններից մեկը — հեղափոխական վարակի ոչախ ե: Այս որերս մեր գործակալներից մեկը կարողացել է իմանալ՝ ով ե հանդիսանում ձեր բանվորների ամենավտանգավոր պարագալուիք:

ՍՏԻՆՆԵՆՍ. — Ո՞վ ե (նկատելի կերպով աժխուժանում ե):

ԿՈՒՐԾ. — Դա վո՞մն կարլ Բառւեր ե, ձուլագործ բանվոր, կոմմունիստ: Նա ճարպիկ կերպով կարողացել է կազմակերպել բանվորներին և մինչև անգամ դադանի տպարան և սարքել հենց ձեզ մոտ՝ գործարանում...

ՍՏԻՆՆԵՆՍ. — (Զայրացած ծուլ և լինում) Այդ չի կարող պատահել. իս ամեն տեղ գործակալներ ունեմ:

ԿՈՒՐԾ. — Պարզ ե, վոր ձեր գործակալները լավ տեղակ չեն, պլ. Ստիննենսլեյն:

ՍՏԻՆՆԵՆՍ. — Յետ բավականաչափ լավ եմ վարձատրում, վոր նրանք համարձակվեն լավ տեղակ չինել...

ԿՈՒՐԾ. — Այդպես ե, դժբախտաբար:

ՍՏԻՆՆԵՆՍ. — Բայց միթե բանվորներն այս լերկու ամսվա քաղցից հետո դեռ ընկճած չեն բավականաչափ, վոր համաձայնեն նորից աշխատանքի կանգնելու... նախկին պայմաններով:

ԿՈՒՐԾ. — Այդպիսի հոսանք կա նրանց մեջ, բայց կոմմունիստների ագիտացիան իր գործը տեսնում ե: Նրանք պիտի պահանջեն լավագույն պարմաններ, մինչև վոր մենք նրանց միջից դուրս չկորզենք գարշելի ագիտատորներին, վորոնց մեջ զլխավոր տեղը բռնում ե Բառւերը:

ՍՏԻՆՆԵՆՍ. — (Կրեմ սիրելով արգեն) Այդ գեղագում, պլ. լեյտընանու, անհրաժեշտ ե բռնել և բանտարկել այդ Բառւերին՝ ինչ գնով ուղում ե լինի:

ԿՈՒՐՅՑ. — Միանգամայն ճիշտ ե, պ. Ստիննենսլեյն, բայց մոռանում եք, վոր մեղանում, զժբախտաբար, դրություն ունի, այսպես ասած, քաղաքական համոզմունքների ազատությունն Կասկածով, այսպես ասած, մինչև պարզվելը, նրան ձերբակալելը վտանգավոր ե. Նա մեծ անուն ունի բանվորների շրջանում, իսկ ուրիշ կերպ... Բառերի մասին պաշտոնապես հարանի ին միայն, վոր նա կոմմունիստական կուսակցության անդամ ե:

ԱՏԻՆՆԵՆՍ. — Այդքանը միանգամայն բավական ե նրան ձերբակալելու համար:

ԿՈՒՐՅՑ. — Բայց ելության դուք բոլորովին իրավացի լեք, բայց ձեր համար հարկավոր կլինի վորես մեղադրանք ե... Ես գեռ չասացի ձեզ, վոր լերեկ նրա տանը կտտարվել ե խուզաբարկություն, վորը սակայն, վոչ մի հետեանք չի տվել, իսկ նա ինքը թագնվել ե:

ԱՏԻՆՆԵՆՍ. — Ձեր առաջմբկը հետազայի համար:

ԿՈՒՐՅՑ. — Հարկավոր են հավատարիմ մարդիկ, պործակալներ, պ. Ստիննենսլեյն, հետեարար հարկավոր ե փող, շատ փող: (Սինենալեյնը ուսերը գեր ե բառում):

ԱՏԻՆՆԵՆՍ. — Ի՞նչ գումարի չեկ պիտի զրեմ:

ԿՈՒՐՅՑ. — Առայս հազար մարկը բավական կլիներ:

ԱՏԻՆՆԵՆՍ. — Արտահղ լերկու հազար ե: Մի հազարը ծախսերի համար, մյուսը՝ ձեզ՝ ավելի լեռտնով աշխատելու:

ԿՈՒՐՅՑ. — Դուք շատ բարի լեք, պ. Ստիննենսլեյն: (Գոհութակուրյամբ մեղագործ ե փողը): Խուզաբարկությունն այնքան ել անհաջող չի վերջացել: Իմ կարգադրությամբ ժանդարմները զանակ են մի կին, վոր ապրում ե Բառերի հետ միևնուն տան մեջ՝ վոմն Մարթա Բյուտների: Նա խանութպանի կին ե, Բառերի հետ ել չունի: Յես արդեն խոսել եմ նրա հետ: Հոտառու կին ե, վորի շնորհիվ նա, կարծում եմ, կարող ե մեզ ողտակար լինել:

ԱՏԻՆՆԵՆՍ. — Վորպես զաղտնի գործակմանը:

ԿՈՒՐՅՑ. — Միանգամայն իրավացի լեք:

ԱՏԻՆՆԵՆՍ. — Գեղեցիկ: Դուք ամեն բան վերջացրել եք նրան:

ԿՈՒՐՅՑ. — Վաչ բոլորովին: Դա մի ալնպիսի տիպ ե, վորին, փողից բացի, հարկավոր են նաև միքանի ջերմ խոսքեր: Լավ կը լիներ, յեթե ընդունելիք նրան:

- ՍՏԻՆՆԵՆՄ. — (Դեմքը կննուելով) Դա անհրաժեշտ է:
ԿՈՒՐՑ. — Ալլապես չեյի համարձակվի անհանդստացնել ձեզ ալլ
առաջարկով, պ. Ստիննենսլելն:
- ՍՏԻՆՆԵՆՄ. — Լավ, համաձայն եմ:
- ԿՈՒՐՑ. — (Յելենելով) Ցես առաջուց նախատեսում եյի ձեր հա-
մաձայնությունը, պ. Ստիննենսլեյն, և այդ պատճառով
(ժպտում և բծնությով) թույլ տվի ինձ... Տիկին Բյուտներն
այստեղ և արդեն...
- ՍՏԻՆՆԵՆՄ. — (Ձանգահարում ե, ներս և մանում սպասավորը)
Հրավիրեցեք այստեղ այդ... տիկնոջը, վոր յեղել և պ. լեյ-
տընանտի հետ:
- (Սպասավորը գլուխ տալով զուրս և զնում. Սպասավորը
ներս և քերում Մարքս Բյուտներին. սա յերեսը ծածկել և
քանձու բողով. ներս մանելով՝ բարեփում ե, ծունկ խո-
նարեսում. զօրված-զարդարված ե. Սպասավորը հեռա-
նում ե):
- ԿՈՒՐՑ. — Ահա և հարդելի տիկին Բյուտները. Մի վախեք, ֆրառ-
քլուտներ, այստեղ վոչվոք չկա: (Մարքս Բողը բարձրաց-
նում ե):
- ՍՏԻՆՆԵՆՄ. — (Մանր ու մեծ զլխով և անում հազիվ-հազ
առանց ներ տալու յեվ առանց նսել հրավիրելու). Դուք
Բառւերների հարևանուհին եք:
- ՄԱՐԹԱ. — Այո, պ. Ստիննենսլեյն, այդ ընտանիքն ապրում և
իմ կողքին:
- ՍՏԻՆՆԵՆՄ. — Պ. լելտընանտը ձեզ, լիրեի, ասել և արդեն, վոր
մեղ միքանի տեղեկություններ են հարկավոր այդ ընտա-
նիքի մասին:
- ՄԱՐԹԱ. — Այո, պ. Ստիննենսլեյն, մինք արդեն խոսել ենք ոլ-
լելտընանտի հետ, բայց յես, իսկապես, չզիտեմ ինչով կտ-
րող եմ ոգտակար լինել. յես — մինակ կին եմ:
- ՍՏԻՆՆԵՆՄ. — Զեզ հայտնի՞ յի արդիք, թե ո՞ւր և զանվում այժմ
կար Բառւերը, և ուրիշ վորե մեկը լինո՞ւմ և արդյոք նրանց
ընակարանում.
- ՄԱՐԹԱ. — Ո՛, պ. Ստիննենսլեյն, այդ բանին հետևելը շնոր դը-
վար ե: Հիմա նրանց մոտ մարդ շատ քիչ ե գալիս, ու ինքը
Բառւերն ել տանը չի լինում գրեթե, իսկ նրա կինն ու
վորդին գրեթե ծանոթներ չունեն: Դա շատ դժվար և (հա-
ռաջում ե):

ԱՏԲՆԵՆԵՆԾ. — (Յքոռք ցուց տալով) Խնդրեմ: (Մարքան նստում են: Ստիճաննալելոց հանդիսավոր յեզ ծանր ու մեծ շարունակում ե) Հիշեցնք, ֆրառ, այժմ մեզ ամեն մի հայրենասիր հարկավոր ե, այլապես խեղճ Գերմանիան կկործանվի... (Պատճուսվ) Այս, կկործանվի, և մենք բոլորս հանցավոր կիմնենք այդ բանում: Յերկրին սպառնում ե կործանում, յեթե մենք լուանդուն չիմնենք:

ԿՈՒՐՑ. — Մի մոռանաք, ֆրառ, սուսական հեղափոխությունը:

ԱՏԲՆԵՆԵՆԾ. — Մեզանում ել, ինչպես Ռուսաստանում, կխեն գործարանները, ֆարբիկաններն ու խանութները... Դուք, կարծեմ, խանութ ունեք, ֆրառ:

ՄԱՐԹԱ. — Ո՛, ասաված իմ... իմ խանութը կը ո՞իզարասսեյի վրա իմ, պ. Ստիճաննալելու:

ԿՈՒՐՑ. — Հեղափոխությունը վոչքոքի և վոչ մի բանի չի խնալի:

ԱՏԲՆԵՆԵՆԾ. — Մենք պետք ե ոգնենք մեր հայրենիքին. հասկանում եք, ֆրառ: Դուք, իրեն հայրենասիր կին...

ՄԱՐԹԱ. — Ախ, պ. Ստիճաննալելու, վորքան ցավում եմ, վոր չեմ: Կարող ոգտակար լինել (անվեռականության մեջ ե: Կուրցն ու Ստիճաննալելը նշանակից նայում են իրար): Յես ստիպված եմ ամբողջ որը նստել իմ խանութում, վոր մի կտոր հացի փող աշխատեմ:

ԱՏԲՆԵՆԵՆԾ. — (Փող հանելով) Յես կամենում եմ մեր դաշինքը կնքել մի փոքրիկ գումարով, ֆրառ:

ՄԱՐԹԱ. — (Այժերով հաշվում ե). Ո՛, շնորհակալ եմ, պ. Ստիճաննալելու:

ԱՏԲՆԵՆԵՆԾ. — Խոստանում եմ հետագայում տալ շատ ավելի շոշափելի մի գումար: Ամեն ինչ կախված կիմնի միայն ձեզ զանից: Ազգպետ, ուրիմն, անցնենք գործի: Մեր նպատակն ե՝ առիթ գտնել Բառերին ձերբակալելու և, պարզ ե, նրան իրեն գտնելու ի՞նչ եք կարծում, ֆրառ, փոքրիկ Բառերը կարմազ և մեզ վորոշ տեղեկություններ տալ:

ՄԱՐԹԱ. — (Պատճենով) Փոքրիկ Բառերը շատ բան գիտի: Բառերները մի սենյակ ունեն:

ԿՈՒՐՑ. — Թույլ տվեք, թույլ տվեք, պ. Ստիճաննալելոյն, զուք չե վոր ձեր գործարանին կից զպրոցի հոգարարձուն եք: Այնանդ և սովորում փոքրիկ Բառերը:

ՄԱՐԹԱ. — Այս, այս, կարծեմ. բայց զպրոցը ժամանակավորապես փակվել ե, և աղան զպրոց չի գնում, վո՞չ վոտնաման ունի, վո՞չ հագուստ և միշտ քաղցած ե:



ՍՏԻՆՆԵՆՄ. Յես կարգադրեցի դպրոցը փակել մինչև դործա-
դուլի վերջը, բայց բավական ե կարգադրեմ, և վաղն ևեթ
յերեխաներին հնավաքեն:

ԿՈՒՐՑ. — Յես կարծում եմ, պ. Ստիննենոլեյն, դա պետք ե վոր-
քան կարելի լի շուտ անել, բայց այնպես մի բան սարքել՝
հոգաբարձուների կողմից նվերներ բաժանել կամ դրա պես
մի բան, վոր փոքրիկ Բառերին ձեռք գցենք և բանվոր-
ների մեջ ել կասկած չհարուցենք: (Դիմելով Մարքարին)
Զեր գործը պիտի լինի՝ այնպես անել, վոր Բառերի վոր-
դին դպրոց դա:

ՄԱՐԹԱ. — Ի՞նքը Բառերն արդեն միքանի որ և տանը չի, իսկ
նրա կինը չի հասկանում, ինարկե, բանն ինչումն ե: Այնպես
կանեմ, վոր Թրիցը գա դպրոց, պ. Ստիննենոլեյն, հանդիսա-
լեղեք, և այն ժամանակ փայփայանքներով ու նվերներով
կարելի լի փորձել բան իմանալ...

ԿՈՒՐՑ. — ... իմանալ, թե ուր ե հալըը...

ՄԱՐԹԱ. — Այո, յեթի գործը նուրբ կերպով տարվի: Տղան հոր
զավակն ե: Համրի պես լուսմ ե:

ԿՈՒՐՑ. — Հանդիսատ յեղեք, Փրառու, մենք խոսել ստիպելու մի-
ջոցներ ունենք... և վոչ միայն փոքրերի համար, համամա:

ՍՏԻՆՆԵՆՄ. — Ուրեմն, ձեր հետազա ծրագիրը:

ԿՈՒՐՑ. — Դուք անմիջապես պիտի ալցելք դպրոց. լիս կգամ
ձեզ հետ, իսկ այնուհետև կերեա: Ամեն ինչ կախված է ձեր
կարողանալուց, պ. Ստիննենոլեյն:

ՍՏԻՆՆԵՆՄ. — (Վոսի յենելով) Յես համաձայն եմ: Գործեցնք:
(Մարքան, ծունկ խոնարհելով, զլուխ և օալիս): Դուք
Զեր վարձատրությունը կստանաք ամսեամիս, պ. լիլ-
տընտիմի միջոցով: Պատիվ ունեմ:

ԿՈՒՐՑ. — (Վոսը վստի և խփում) Պատիվ ունեմ:

(Մարքան, ծունկ խոնարհելով, զլուխ և օալիս, նորից
իշեցնում ե բողք յեզ դուրս գնում Կուրցի հետ):

ՊԱՏԿԵՐ Յ-ՐԴ

ԴՊԲՈՑՈՒՄ

Դպրոց, Շերտանի ծառա Մորիցը՝ 60 տարեկան, հատակը սրբում է,
ՖԲԻՑՆ ՈՒ ԵԲԵԱՆ.—(Ներս են մանոււմ) Բարի որ, քեռի Մորից։
ՄՈՐԻՑ.—Ա, բարի որ, ճուտիկներս։

ՖԲԻՑ.—Քեռի Մորից, չդիտեմ մեղ ինչու լին կանչել զպրոց։
ՄՈՐԻՑ.—Պ, Սաբննենուինը ուզում ե, ուզում ե, զիտեք ինչ
ճուտիկներս, իր անազին կարողությունից ձեղ ել մի փոք-
րիկ բաժին տալ Խոստացել և աղքատ ճուտիկներին տաք
շոր բաժանել։

ԵԲԵԱՆ.—Յես կրկնակոչիկներ կուզելիք ստանալ, քեռի Մորից. իմ
կոշիկները վատն են, իսկ գուրսը ենապես ցուրտ ե։

ՖԲԻՑ.—Իսկ ինձ, քեռի Մորից, վաչինչ հարկավոր չի։ Հայրիկն
տառմ ե, վոր բոլոր հարուատները վատ մարդիկ են և
տանջում են իրենց բանվորներին։ Այսու։

ՄՈՐԻՑ.—Փողն ամենքին փչացնում ե, ճուտիկներս։

ԵԲԵԱՆ.—Մենք եսոր, ժամը 5-ից, հացի համար հերթի ելինք
կանոննել և վաչինչ չստացանք, քեռի Մորից։

ՖԲԻՑ.—Իսկ մեր փառմը յերեք մարդ եր մնացել. մինչև հերթը
մեղ հասներ, հաց տալը զազարեցրին։

ՄՈՐԻՑ.—Ե՛, վատ ե, վատ ե ։ Նշանակում ե՞ եսոր սոված փորով
եր, բայց լավ ե, քեռի Մորիցը մի յերկու կտոր բուլկի
ունի։ Սպասեք (զնում ե)։

ԵԲԵԱՆ.—Դու բուլկի ուզմաւմ ես, ֆրից։

ՖԲԻՑ.—(Վոչ անմիջապես) Ուզում եմ... իսկ դժւ։

ԵԲԵԱՆ.—(Չեսները ծալելով) Շատ եմ ուզում։ (Յերկուսն ել
հայում են Մորիցի կողմբ)։

ՄՈՐԻՑ.—(Մանում ե) Ահա ձեղ յերկու կտոր բուլկին Կերեք
(առիս ե)։

ՅԵԲԵԱՆՆԵԲԻԾ.՝ Շնորհակալություն, քեռի Մորից։ Ո՞, ինչ հա-
մով ե։ (Ռւտում են այսերենին ուղցրած)։

ՄՈՐԻՑ.—Այո, համով ե, համով, ճուտիկներս (Քննութեն ոյում
ե ներանց զլուխը, մասխոն)։ Այո, իհարկե, ոլ. Սաբննենս
լինի յերիխանները ժամերով հերթ չեն կանգնում... և չոր
հացի կտորի համար չեն ուրախանում... Այն, աշխարհը
վատ ե կազմակերպված...»

ԵՐՆԱ.—Ֆրից, դու մի կտորը բուլկի գցեցիր. կարելի՞ ի՞ վեցը-
նում և հատակին քնկած փշանթները,

ՖՐԻՑ.—Վերցրնեւ, երնա, իմ կտորը քոնից քիչ մեծ եր, հիմի
հավասարվեց: Վերցրնեւ:

ՄՈՐԻՑ.—(**Տիգրուրյամբ**) Եսորվա իմ հացը, լերիխեք, քառթու
յեւ. եսոր հացի չեմ գնացել —քնով ելի անցել միքիչ: Սազ
գիշերը աչքս չեմ կպցրել վոսկըներս ցավում ելին:

ՖՐԻՑ.—Խսկ իմ վոսկըներս սկի չեն ցավում: Թեոփ Մորից, լես
շատ լավ եմ քնում: Քունս իսկույն տանում եւ:

ԵՐՆԱ.—Յես ել եմ իսկույն քնում:

ՄՈՐԻՑ.—Եղ շատ լավ եւ մենակ ծեր մարդկանց վոսկըներն են
ցավում: Ո՞հ, չեմ կարողանում վոչ կունալ, վոչ բար-
ձրանալ: Ո՞հ (մեջք օրորում և յեզ նորից սկսում հատակը
ուրեմ):

ՖՐԻՑ.—Տներ, մենք քեզ կողնենք, քեոփ Մորից:

(Երեսն վեցնում և խոզանակը, շնչոցը յեզ ոգնում):

ԵՐՆԱ.—Քեզ համար, քեոփ Մորից, դժվար եւ, չե՞ս, ամբողջ որն
աշխատել: Ալժ:

ՄՈՐԻՑ.—Այո. յես մեջքս չելի ծոփ, յեթե անիծխալ պատերազմը
վորդում՝ Ռուտին չուտեր: (Հառաջում եւ):

ԵՐՆԱ.—Իմ հայրիկն ել եւ պատերազմում մեռել (վոսի կանգ-
թելով): Յես հայրիկիս հիշում եմ: Նա մեծ եր —այ հսպիս
(արոռի վրա կանգնելով՝ ցույց եւ ալիս օտա բարձր):

ՖՐԻՑ.—(**Զհավատալով**) Եհ, եղանք մեծ մարդիկ սկի չեն ել լի-
նում, երնա:

Ներս ե մտնում Ֆրառ, Դենեկեն:

ԴԵՆԵԿԵ.—Դեռ մինչև հիմա չեք մաքրել, Մորից: Դուք, լերիշ,
ուզում եք պաշտոնից արձակվել:

ՖՐԻՑ. Եթե, ԵՐՆԱ.—Բարեն, քրառու Դենեկե:

ԴԵՆԵԿԵ.—(**Լուռ օարժում և զլուխը**) Տեր աստված, միթե չենք
հասկանում՝ ինչ ե նշանակում պ. Ստիննենսլելնը դալիո
եւ: Միթե չեք հսուկանում:

ՄՈՐԻՑ.—Ներեցեք, քրառու Դենեկե, բալց զեռ 9-ը չկա, իսկ ոլ-
ու Ստիննենսլելնը գալու յեւ 10-ին: Հիմա կվերջացնեմ, հենց
հիմա, ես բոպելիս Ներեցեք, քրառու Դենեկե:

Դեւեկեւ. — Հերիք ե խոսեք, վերջացրեք:

(Թեառ Դենեկեն մոտենում ե պահարանին յեզ պապի-
ռոսի բուդր ե հանում):

Ներս են մտնում Մաքսն ու Ալիսան,

ՄԱՅԱ. Յեզ, ԱԼԻՍԱ. — Բարե՛, ֆրառ Դենեկեւ:

ԴԵՆԵԿԵՎ. — (Գլխով ե անում) Դու ուղարկածս վոտանավորը
սովորել ես, Ալիսա:

ԱԼԻՍԱ. — Սովորել եմ, ֆրառ Դենեկեւ:

Մորիցը, զործը վերջացնելով, գնում եր:

ԴԵՆԵԿԵՎ. — Այս թղթից ծաղիկներ շինեցեք, ինչպես սովորեցրել
եմ (հանում ե յեզ լուսամուտի գոզին ու փոքրիկ պահա-
րանի վրա փռում ե փոքրիկ անձեռոցիկները, Դուրս
ու ներս ե անում, պսպղան բաներ ե բերում յեզ սե-
նյակը զարգարում) Դենեկեյի գուրս զնացած մոմենտին
ներս ե մտնում Լոստան):

ԼՈՍՏԱ. — (Նայելով ծաղիկներին) Եղագես ել զիտելի: Հոգա-
րարձուն գալու լի Համամահա: Բոլոր թանգաղին բաները
զասավորել փոսել են ինչպէ չեք խոսում:

ԵՐԵԱ. — Շատապում ենք ծաղիկներ շինենք:

ԼՈՍՏԱ. — Բա ջագուն մեր ե:

ԵՐԵՅ. — Նա ջագուից փիս ե. տեսնեյիր վո՞նց հարձակվեց Մո-
րիցի վրա և նապես չե՞ն, Երնա:

ՄՈՐԻՅ. — Կամաց, լերեխեք. ձեր պատճառով մեկ ել կուտեմ:

Ներս ե մտնում Դենեկեն, Լոստան կնիկսն ե անում:

ԼՈՍՏԱ. — Բարե՛, ֆրառ Դենեկեւ:

ԴԵՆԵԿԵՎ. — Դու կրկնեցիր քո պարը, վոր անցլալ տարի պարե-
ցիր:

ԼՈՍՏԱ. — Կրկնել եմ, ֆրառ Դենեկեւ:

ԴԵՆԵԿԵՎ. — Զգեսաներդ հազիր ե նորից կրկնիր իմ տուաջ:

ԼՈՍՏԱ. — Բայց յս զգեսաներ չունեմ, ֆրառ Դենեկեւ:

ԴԵՆԵԿԵՎ. — Ի՞նչպես թե չունեմ: Զե՞ վոր քեզ պարոցում զգեսաներ
տվին:

ԼՈՍՏԱ. — Բայց, զիտեք, ֆրառ Դենեկեւ, ինձ մի փոքրիկ յեղբարը
ծնվեց, նրան փաթաթելու բան չկար. վերցրին արդ սիպ-
տակ փալտաներով փաթաթեցին:

ԴԵՆԵԿԵ. — Տեր իմ աստված: Զեր ծնողներին ասացեք, վոր այդ զգեստի արժեքը կպահանջվի նրանցից, իսկ դու, պարոն Ստիննենսլեյնի գնալուց հետո, Յ ժամով կկանգնես անկունում: Տեր աստված, տեր աստված, ինչ անեմ հիմի Զգվելի աղջիկ:

ԼՈՅՏԱ. — Ներկցեք, ֆրառու Դենեկե: Յեղբորս, ճիշտ եմ ասում, փաթաթելու բան չկար բոլորովին: Յես կպարեմ այս շորերով: Կարելի՞ յի:

ԴԵՆԵԿԵ. — Կարելի՞ յի: Իսկ յիս ի՞նչ պիտի անեմ: Ակսպիսի մի տոն որ, յերբ գալիս ե ինքը պ. Ստիննենսլեյնը, և վոչ մի հանդիսավորություն: Զգվելի, ապերախտ յերեխաներ:

ՖՐԻՑ. — Ֆրառու Դենեկե, իսկ ինչու համար պետք ե մենք շնորհակալ լինենք: Չե վոր պ. Ստիննենսլեյնը դեռ վոչ մի լավ բան չի արել:

ԴԵՆԵԿԵ. — Լոյտ, թե չե դուրս կանեմ դպրոցից:

(Լոյտիուն):

ԱԼԻՍԱ. — Ծաղիկները պատրաստ են, Ֆրառու Դենեկե:

ԴԵՆԵԿԵ. — Մաքսի հետ դասավորի (նայում ե ժամացույցին): Տեր աստված, 10-ից քառորդ ե պտկաս, իսկ դուք միայն հինգ հոգի յեք: Մա խալտառակություն ե: Ո՞ւր են կորել մյուսները:

ԼՈՅՏԱ. — Յես, ֆրառու Դենեկե, հանդիպեցի Գրետա և Լուիզա Մյուլերներին: Նրանք չեն գալու, վորովհետև գուլպա ու կոշիկ չունեն:

ՖՐԻՑ. — Հանս Դառլին ու Վերներին հիվանդանոց աւարան:

ՖՐԻՑ. — Բետոնի մայրիկը յերեկ թոքախտից մհուավ:

ԴԵՆԵԿԵ. — Հերիք ե, լուցեք: Տեղներդ: (Յերեխաները նստում են. Դենեկեն զնում ե զեպի փոքրիկ պահարանք):

ԼՈՅՏԱ. — (Շենջում ե Ֆրիցին ու Շենային) Հիմի վարդապույժ բանտեր ե տալու: Եդ միշտ, յերբ հոգարաձուն գալիս ե, տալիս են:

ԴԵՆԵԿԵ. — (Թանօերը բաժանում ե) Կապեցեք — աղջիկները գըլիին, տղաները գոտիի վրա: Յերբ պ. Ստիննենսլեյնը գնա՞ կվերադարձնեք ինձ: (Յերեխաները կապում են: Ներս և մանում զանակահարուիի Ֆրառու Յերժախեն — զգզգզված մազերով մի պառավ, վոր շարունակ ինչ-վոր ծամում ե յեզ բոլորից վախենում):

ցերպառենեն. — (Յուրաքած) Բարե՛, Փրառու Դենեկե՛, բարե՛, յերեխեք:

Ցերպեսպառեն. — Բարե՛, Փրառու Ձերփախեն:

Դենեկե՛. — Դուք կարող ելիք այսպիսի որն ավելի շուտ դալ: Նըստեցեք զաշնամուրի մոտ (Թրառ Շերթախենը նստում է յեզ ափելի կռանում, կուզը գուրս զցում):

Ցրիջ. — (Երենալին) Յես զրան խղճում եմ:

Երնը. — Յես եւ:

Դենեկե՛. — Աւշազրություն, չխոսել, թե չե զուրս կանեմ ձեզ: Յերը պ. Ստիննենսլեյնը ներս մանի, զուք վոտքի կկանդնեք, կժպտաք և բարձր կասիք՝ «բարե՛, շատ հարդիլի և սիրելի պ. Ստիննենսլեյն»: Այ ասպիս (ցույց ե տալիս): Արք: (Յերեխաները մաքում են):

Ցրիջ. — Իմ հայրիկն առում ե՝ սուտ խոսելը լավ բան չի, իսկ թե պ. Ստիննենսլեյնը սիրելի չե՝ դա ճիշտ չի: Նա շատ չար մարդ ե, բանվորներին սկի չի խղճում:

Դենեկե՛. — Այս բազելին կանգնիր անկլունում:

Ցրիջ. — (Գնում ե զեպի անկունը, Միշանցիում լսվում են ստիննենսլեյնի յեզ Կուրցի հայները):

Դենեկե՛. — Նստիր տեղու:

ԱԼԻՍԱ. — (Սաբուկ) Ինձ տված վոտանավորը վորքան կարելի չե լավ պիտի կարգամ և խնդրեմ, վոր պ. Ստիննենսլեյնը ինձ վերարկու նվիրի:

ՄԱՐԱ. — Լավ աշխատիր, Ալիսա: Յես ամենից լավ կժպտամ. Հսովես, ալ, ու բոլորից ել բարձր կկանչեմ և նույնպես վերարկու կինդրեմ: Գուցե տա, Բնչ ես կարծում, հը:

ԼՈՏՏՈ. — Խոստացել են, թե տաք բաներ և տալու: Յես մի փոքրիկ վերամկ պիտի խնդրեմ յեղորս համար կամ վառելու փայտ: Ենպիս չի, երնա:

ԵՐՆԱ. — Եղանակ իսկ յես կրկնակոշիկներ կուզելի և 10 ֆունտ հաց:

Ցրիջ. — Դա շատ ե, երնա:

Ներս և մժնում պ. Ստիննենսլեյնը, Կուրցը, ուղեկցությամբ Թրառ Դենեկելիք: Յերեխաները Յերեխաները վոտքի յեն կանգնում յել վողունում:

ԱՏԻՆՆԵՆԱ. — Բարե՛, յերեխաներ: Բարե՛, Փրառու Դենեկե՛: Թուլ ավելք ներկայացնել ձեզ իմ բարեկամ ինժեներ պ. Ցվանցիկերին, վոր սիրալիր կերպով իր ծառալությունն առաջարկեց մեր զպրոցի վերանորոգության համար...

ԴԵՆԵԿԵ. — (Կոռավելով) Ախ, յես ալնքան պարտական եմ ձեզ,
պ. Ստիննենսլեն, Պ. Ցվանցիգերն ալնքան սիրալիր ե...
Թույլ տվեք, պ. Ստիննենսլեն, յերախտագիտ յերեխաները
միքանի բան ցույց տան, վոր իրենց սեփական ցանկու-
թլամբ պատրաստել են ձեր ալցելության առթիվ: Լուսաւ,
փոքրիկս, պարիր քո պարը: (Յալիս ե Երան բղբե-
րի փունչը, Լօսան պարում ե): Երնա, սիրելիս, այժմ քո
յերգը: (Երնան յերգում ե): Խոկ այժմ իրանց յերեխանե-
րի գրածներից: Ալխա, կարդա:

Ալխան արտասանում ե.

Մենք կհաղթենք կամ կմեռնենք,
Մեծ Գերմանիալի հերոսներս.
Կեցցե հերոս Ռուպրեխտը,
Մեր անդին թագաժառանգը:
Մեղ հետ ե ասոված:
Բոլորս գալիս ենք յետևից:
Թող տերը պահպանի քիզ,
Մեր խնամող ու բարի հայր:

ՍՏԻՆՆԵՆՍ. — Զգացված եմ, թանգագին ֆրեյլեն Դինեկե: Շնոր-
հակալ եմ ձեզանից, յերեխաներ: (Ռւսագիր նայում ե յե-
րեխաներին: Քրառ Դենեկեն կարծում ե, քե նա ինչ-վոր
բանից զգոնի ե),

ԴԵՆԵԿԵ. — Ներեցեք, խնդրեմ, պ. Ստիննենսլեն, վոր այսքան
քիչ են հավաքվել, բայց ձեր գալու ուրախությունն ան-
սպասելի յիր. զպրոցը փակ եր:

ՍՏԻՆՆԵՆՍ. — (Ընգեանելով) Վոչինչ, վոչինչ: Յես կուզելի իմա-
նալ ներկու յեղող աշակերտների անուն-ազգանունը, (ուղղ-
վելով) այսպես ասած՝ ծանոթանալ նըանց հետ:

ԴԵՆԵԿԵ. — Խնդրեմ, խնդրեմ: Շարլոտա Հայնե, երնա Վալտեր,
Ֆրից Բառեր, Լուիզա և Մաքս Շպիցել:

ՍՏԻՆՆԵՆՍ. — Իմ կողմից նվերներ տվեք դրանց:

(Քրառ Դենեկեն կապույտ սոպրակներով կանձնեա ե բաժանում
յերեխաներին: Եերեխաները աւրակուսած, սփորված են):

ԿՈՒՐՅՅ. — Յես պետք ե իմ գոհունակությունը հայտնեմ ձեզ,
հարգելի Փրառ Դենեկե: Իրանց՝ յերեխաների գրած վո-
տանավորը պարզ ցույց ե տալիս ձեր դպրոցի բարձր հալ-
քենասիրական վոզին:

ԴԵՆԵԿԵ. — (Շուպած) Ա, պ. Ցվանցիդեր, միթե կարող եք ուրիշ
կերպ լինեք միթե մենք բոլորս չենք պաշտում մեր միա-
պետին, մեր հայրենիքը:

ԿՈՒԲԾ. — Յես կարծում եմ, վոր յերեխաներն սպասում են, այս-
պես ասած, հոգեոր սնունդի: Յերեխ սրանց շատ վշտացնու-
ե... Միթե զուք միքանի խոսք չեք ասի նրանց լերկը
այժմյան զրության մասին:

ՍՏԻՆԵՆՑ. — Այս, այս, իմ թանգագին բարեկամներ, Յես ուզում
եմ ձեզ միքանի խոսք ասել: Մեր թանգագին հայրենիքը,
պաշտելի Դերմանսիան, նվիրված զավակների կարիք ունի
Մեր հայրենիքն ապրում և պատմական մեծազույն մո-
մենու: «Մենք կհաղթենք կամ կմեռնենք», զուք շատ լավ
ասիք արդ բանը: Խակ զրա համար զուք պետք և լինեք
հերոսներ: Թող ձեզնից լուրաքանչյուրը դառնա հայրենա-
սեր-հերոս և յերեք չգնա մեր թշնամի կոմմունիստների
սխալ ճանապարհով: Թող ասաված ոգնի ձեզ:

ԴԵՆԵԿԵ. — (Արցունենեց սրբելով) Դուք հուզեցիք ինձ, պ.
Ստիննենսլեյն, ձեր խոսքերն իսկական ճշմարտություն են:
ԿՈՒԲԾ. — Պ. Ստիննենսլեյնը այնպես և սիրում ձեզ, թանգագին
լերեխաններ, այնքան բան և ասել ինձ ձեր մասին:

ՅԲԻՑ. — (Բոլոր ժամանակ ուշագիր լսել և Ստիննենսլեյնի խոս-
ւեր յեփ պատրաստվում եր ինց-վոր բան ասել, բայց չհա-
մարեակվեց) Պարոն, զուք, ուրիմ, կոմմունիստներին չեք
սիրում և նրանց համարում եք վատ մարդիկ:
(Դենեկեն սպառնալից նայում և օրիցին),

ՅԲԻՑ. — (Հուզվելով, տաբացած) Նրանք շատ լավ մարդիկ են,
պարոն, նրանք հերոսներ են:

ՍՏԻՆԵՆՑ. — Դու սխալիքում ես, սիրելիս, մարդիկ, վոր աղնիվ
աշխատավորներին կոչ են անում կողոպտել և բռնություն
անել — իմ կարծիքով, — անպիտաններ են և կողոպտիչներ:
Այս:

ՅԲԻՑ. — (Քիչ և մեռում արտասկի) Վաչ, պարոն: Դուք սխալ-
վաւմ եք, զուք սրանց չեք ճանաչում: Բոլորովին չեք ճա-
նաչում:

ԿՈՒԲԾ. — (Եօան և անում Ստիննենսլեյնին) Մեզմաւրյամբ օրի-
ցին) Դու իզուր ես հուզվում, սիրելիս: Դու պ. Ստիննենս-
լեյնը լավ չհասկացար: Պ. Ստիննենսլեյնը խոսում և այն
կոմմունիստների մասին, վորոնք բոլորին վատ բան են

ցանկանում, և վոչ թե նրանց մասին, վորոնց դու ձանառ-
չում ես: Նրանք, յես համոզված եմ, շատ լավ մարդիկ են,
ինչպես քո հայրը, որինակ:

ՅՐԻՑ.—(Աւաեկամաբար հայելով Կուրցին) Այս, պարոն, իմ
հայրիկը լավն ե:

ԿՈՒՑ.—(Ընդհատելով) Յես նրան ճանաչում եմ, հիանալի
մարդ ե:

ՅՐԻՑ.—(Աւրախ) Դուք իմ հայրիկին ճանաչում եք: Այս:

ԿՈՒՑ.—(Միծաղելով) Դե, իհարկե, իհարկե, սիրելիս. քու
հայրիկը հենց այն քաղաքիցն ե, վորտեղից յես եմ: Նա
ծնվել ե Դյուսսելդորֆում:

